

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻԼԻԱ Բ-ԻՆ

ՁԵՐԴ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ԻԼԻԱ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ
ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ

ԹԲԻԼԻՍԻ

Ս. Էջմիածին Մեր վերադարձին արտի տուրք ենք զգում Ձեզ հայտնելու Մեր խորագոյն շնորհակալությունները այն եղբայրական ջերմ ընդունելության և հյուրասիրության համար, որ ցույց տվեցիք Մեզ և Մեզ ընկերակցող պատվիրակությանը ի Վրաստան Մեր այցելության ընթացքին ամսույս 8-ից 11 օրերին:

Անջնջելի և քաղցրագույն տպավորություններով վերադարձանք: Մեր արտաքաղ և մտերմական խոսակցությունները վստահաբար մոտիկ ապագային պիտի ունենան գործնական արդյունք մեր երկու Եկեղեցիների և երկու Կաթողիկոսների սերտ գործակցության համար:

Կաղոթենք առ բարձրյալն Աստված, որ Ձեզ, Ձեր Սինոդի անդամներին, հոգևորական դասին և համայն հավատացյալ ժողովրդին պարգևի բարօրության օրեր խաղաղ, ապահով և արդյունաբեր կյանքով:

Եղբայրական ջերմ սիրով
Աղոթակից՝

ԳԱՐԵԳԻՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
12 սեպտեմբերի 1995 թ.